**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**

« »                2026թ.                N

## ԾԱՆՈՒՑՈՒՄ
### Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

**Հարգելի՛ պարոն Ազատյան**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Պրեստիժ Ֆուդ» ՍՊԸ միջև 2025թ. դեկտեմբերի 30-ին կնքվել է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման մասին ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-Ս-7 ծածկագրով պայմանագիրը:

Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու դեպքում գնորդը իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Հաշվի առնելով, որ 2026 թվականի ապրիլ 27-ից արդեն ներկայացվել է 3 հայտ՝ սակայն մատակարարել է միայն հավի կրծքամիսը, հավի բուդը և կարագը, չի մատակարարվել խոզի միսը և միս տավարի փափուկը, իսկ հունիսի 17 -ի հայտից ընդհանրապես ապրանքները չեն մատակարարվել և դրանց վերաբերյալ կազմվել համպատասխան արձանագրություններ /կից ներկայացվում են արձանագրության պատճենները/:

Արձանագրվում է, որ Ձեր կողմից խախտվել են պայմանագրով սահմանված 2.1.7 կետի ա/ և բ/ ենթակետերի պահանջները:

Վերոգրյալից ելնելով՝ Ձեզ տրամադրվում է 5 հինգ աշխատանքային օր ժամկետ՝ չմատակարարված ապրանքը մատակարարել համար:

Հակառակ դեպքում, սույն ծանուցմամբ տեղեկացնում ենք, որ սահմանված ժամկետում ապրանքը չմատակարարելու պարագայում «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը պատրաստվում է լուծել 2025 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-Ս-7 ծածկագրով պայմանագիրը:

Կից ներկայացվում է 25.06.2026թ. արձանագրության պատճենը:

**ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝**
**ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ՝** [signature] **Մ. ԴԱՎԹՅԱՆ**

ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան 3307, Բաղաբերդ 27
Էլ.հասցե՝ syunik.childcarecenter@mlsa.am, հեռ.՝ (0285-5-43-80)